

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐԸ**

<b>1. Ծրագրի մասնագիտության թվանիշը</b>	<b>անվանումը</b> և	«Զբոսաշրջություն» 101501.00.6
<b>2. Բուհը</b>		«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
<b>3. Ծրագիրը հավատարմագրված է</b>		–
<b>4. Շնորհվող որակավորումը</b>		Զբոսաշրջության բակալավր
<b>5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին</b>		<b>2024-2025</b>
<b>6. Ուսումնառության լեզուն</b>		Գրական հայերեն
<b>7. Ուսուցման ձևը</b>		Հեռակա

**8. Ծրագրի ընդունելության չափանիշները**

Ծրագրի դիմորդը պետք է ունենա ՀՀ եռաստիճան միջնակարգ ընդհանուր կամ դրան համարժեք այլ կրթություն /նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական/: Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

Այլ մասնագիտությամբ բակալավրի կամ համարժեք որակավորում ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննությունների: Այս դեպքում դիմորդը միանգամից ընդունվում է կրթական ծրագրի երկրորդ կուրս:

**9. Ծրագրի նպատակները**

Ծրագիրը նպատակ ունի պատրաստել զբոսաշրջության գծով մասնագետներ, որոնք ունակ կլինեն՝

- մշակելու զբոսաշրջության զարգացման, կազմակերպման սկզբունքներ և ռազմավարական ծրագրեր,
- իրականացնելու պրակտիկ մասնագիտական գործունեություն զբոսաշրջության ոլորտում,
- իրենց տեսական գիտելիքներով և գործնական կարողություններով ու հմտություններով բավարարելու զբոսաշրջության ոլորտի զարգացման արդի միտումներին և պահանջներին:

**10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

**Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. պարզաբանելու զբոսաշրջության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, տեսությունները,
2. մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը,
3. բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում,
4. վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը,
5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը, նշանակությունը,
6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական,

աշխարհագրական և այլն):

**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում,
2. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,
3. գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները,
4. իրականացնելու մարքեթինգի և մենեջմենթի վերաբերյալ վերլուծություններ զբոսաշրջության և ռեկրեացիայի ոլորտում,
5. ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա:

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:
3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:
7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:
9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**11. Ծրագրի ուսումնական պլանը**

Կցված է

**12. Ուսումնական պլանի քարտեզը**

Կցված է

**13. Գնահատման ձևերը**

- ստուգարքներ,
- ընթացիկ քննություններ,
- հետազոտական աշխատանքների կատարում,
- եզրափակիչ քննություններ,
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

**14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները**

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել հետևյալ ոլորտներում՝

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում,
- Զբոսաշրջության պետական կոմիտեում,
- հասարակական առևտրի, սննդի և սպասարկաման ոլորտի ձեռնարկություններում,
- ներքին, ներգնա և արտագնա զբոսաշրջության ձեռնարկություններում,
- գովազդային գործակալություններում,
- հյուրանոցներում և այցելուների տեղաբաշխման այլ հաստատություններում,
- միջազգային օդանավակայաններում և երկաթուղային կայարաններում:

Ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել հետևյալ պաշտոնները,

- ✓ սպասարկման և զբոսաշրջության ոլորտներում որպես զարգացման ռազմավարական քաղաքականության և ծրագրերի նախագծող, իրագործող-կազմակերպող, խորհրդատու-մասնագետ,
- ✓ հյուրընկալության, հասարակական առևտրի, սննդի և սպասարկաման ոլորտի ձեռնարկություններում՝ գործադիր տնօրեն, մենեջերներ,
- ✓ գովազդային գործակալներ,
- ✓ զբոսաշրջային ծառայությունների և փաթեթների մշակողներ և կազմակերպիչներ,
- ✓ զբոսավարներ և էքսկուրսավարներ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ և հարակից այլ բուհերի մագիստրատուրայում:

### 15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- Ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված լսարաններ,
- առցանց դասախոսություն /ավանդական և ինտերակտիվ/,
- էլեկտրոնային ռեսուրսներ:

### 16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- ԵՊՀ ԻՄ 2022-2026. թթ.զարգացման ռազմավարական ծրագիր,
- Բարձրագույն և հետբուհական կրթության մասին ՀՀ օրենքը,
- Հայաստանյան և այլ բուհերի համապատասխան կրթական ծրագրերի բենչմարքինգ,
- ԵՊՀ «Զբոսաշրջություն» կրթական ծրագիր,
- Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի «Զբոսաշրջություն» կրթական ծրագիր, 2007թ.,
- ԱՄՆ, Ռոչեստերի տեխնոլոգիական ինստիտուտի բակալավրի ծրագիր. 2008-2009թթ,
- ԱՄՆ, Դելիվերի պետական համալսարան, «Հյուրընկալության և տուրիզմի կառավարման» բակալավրի ծրագիր 2010-2011թթ.:

### 17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

«Զբոսաշրջություն» ԿԾ-ը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ-ում ընդունված տարբեր կանոնակարգեր, կրթական ծրագրեր, վերապատրաստման նախագծեր, ԵՊՀ ԻՄ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնում կատարվող քննարկումների արդյունքներ, հաշվի է առնվել նաև «Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության» և «Զբոսավարների միջազգային ասոցիացիա»-ի կանոնակարգերը: Ծրագրի նպատակների հաջող իրականացմանը կնպաստի նաև ԵՊՀ ԻՄ-ում գործող «Տավուշի Տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն»-ը:

**1. Ընդհանրական կարողություններ**

**Դասավանդման/մանկավարժական**

- Դասընթացի ուսումնական առարկայական ծրագիր կազմելու կարողություն:
- մեթոդական պատրաստություն՝ դասավանդման, գնահատման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների տիրապետում:
- դասընթացի կրթական վերջնարդյունքների, նպատակների և խնդիրների հստակ գիտակցման ու պարզաբանման կարողություն,
- ուսանողների ակտիվության խրախուսման և մոտիվացնելու կարողություն,
- ընդհանուր նպատակ սահմանելու և դրա իրականացման ուղղությամբ ջանքերը համատեղելու հմտություն
- ուսանողների հետ անհատական աշխատանք կատարելու կարողություն
- ուսանողներին վերլուծական հմտությունները զարգացնելու, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, տեսական եզրակացություններ կատարելու կարողությունների ներդրման ձգտման առկայություն

**Հետազոտական**

- Հետազոտական աշխատանքների իրականացման հմտություն:
- մանկավարժական դիագնոստիկական գործառույթների տիրապետում:
- բաց նոր գաղափարների և հեռանկարների համար
- ինտերդիսցիպլինար և համալիր հետազոտությունների մեթոդաբանության, մացություն և իրականացման հմտություն
- դասավանդման, հետազոտությունների իրականացման ուսումնասիրության մեթոդների ճիշտ ընտրության և կիրառման հմտություն

**Հաղորդակցման**

- Ուսանողի հետ միջանձնային հարաբերությունների հաստատման և կառուցողական փոխառնչություններ կառուցելու կարողություններ:
- դասընթացը և դասապրոցեսը պլանավորելու, լսարանը կառավարելու կարողություններ:
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**SՀՏ կիրառություն**

- Բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point) հմտություններ:
- Լուսացուցադրություններ պատրաստելու և ներկայացնելու կարողություն (pptx, prezi, canva կամ այլ):

**Այլ**

- Մանկավարժական էթիկայի կանոնների տիրապետում:
- Բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերի իմացություն և կիրառման

կարողություն:

## 2. Մասնագիտական կարողություններ

- Դասավանդման ոլորտի հիմնախնդիրների և մեթոդաբանական հիմքերի տիրապետում:
- Դասավանդման գործունեության հիմքում ընկած դասընթացի հիմնական հասկացությունների, հայեցակարգային մոտեցումների, տեսակետների սահմանման կարողություն՝ հաշվի առնելով լսարանի առանձնահատկությունները:
- Ուսուցման գործընթացում ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման կարողություն:
- Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծելու կարողություն:
- Դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ ձևակերպելու, անհրաժեշտ նյութեր և ուսուցման միջոցներ ընտրելու կարողություն:
- Առցանց ձևերով, լուսացուցադրությունների և այլ եղանակներով ուսումնական նյութեր պատրաստելու և ներկայացնելու կարողություն և հմտություն:
- Ոլորտի մեթոդական առաջավոր փորձի իմացություն և ստեղծագործական կիրառման կարողություն:
- Կրթական ծրագրի վերջնարդյունքներին առարկայական/մոդուլային ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանեցնելու կարողություն:

## 3. Ընդհանուր պահանջներ

### Գիտական աստիճան և կոչում

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող առարկայի/մոդուլի ոլորտում:
- Գիտական կոչման առկայություն /ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար / :
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող առարկայի/մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

### Մանկավարժական փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն (նվազագույնը 3 տարի):
- Պաշտոնի անձնագրով զբաղեցող պաշտոնին (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր) ներկայացվող
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:

### Պրակտիկ աշխատանքի փորձ /ցանկալի է/

- Մասնագիտական գործունեության փորձառություն:

### Այլ պահանջներ

- Առցանց ուսուցման տեխնոլոգիաների տիրապետում:
- դասապրոցեսը Moodle ծրագրով իրականացում

**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՐՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

<b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		<b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b>	
Ա1	Պարզաբանելու զբոսաշրջության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, տեսությունները:	Գ1	Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
Ա2	Մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը:	Գ2	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:
Ա3	Բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում:	Գ3	Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Ա4	Վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը:	Գ4	Մտանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
Ա5	Գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը, նշանակությունը:	Գ5	Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
Ա6	Տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին մոտեցումները դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն):	Գ6	Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:
		Գ7	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
		Գ8	Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:
		Գ9	Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**

Բ1	Իրականացնելու մարքեթինգի և մենեջմենթի վերաբերյալ վերլուծություններ զբոսաշրջության և ռեկրեացիայի ոլորտում:	Բ4	Գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներ ու ենթակառուցվածքները:
Բ2	Իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում:	Բ5	Ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա:
Բ3	Կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:		

**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ**

	Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																				
			Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	Գ9	
1.	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B01									+					+	+						
2.	Ֆիզդաստիարակություն	0001/ B02															+	+					
3.	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B03										+				+					+		
4.	Ռուսաց լեզու-1	0305/B04														+					+		
5.	Ֆիզդաստիարակություն	0001/ B05															+	+					
6.	Ռուսաց լեզու-2	0305/ B06														+					+		
7.	Հայոց պատմություն -1	0304/B07					+														+		
8.	Ֆիզդաստիարակություն	0001/ B08															+	+					
9.	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/ B09																+			+		
10.	Հայոց պատմություն -2	0304/B10					+														+		
11.	Ֆիզդաստիարակություն	0001/ B11																					
12.	Փիլիսոփայություն	0304/ B12						+			+										+		
13.	Անգլերեն-1	0305/ B13														+	+				+		
14.	Ֆրանսերեն-1	0305/ B13														+	+				+		
15.	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	0001/B14																+			+		
16.	Անգլերեն-2	0305/ B15														+	+				+		
17.	Ֆրանսերեն-2	0305/ B15														+	+				+		
18.	Բարոյագիտության հիմունքներ	0303/ B16											+				+	+					
19.	Գործարարության հիմունքներ	0201/ B16			+						+	+											
20.	Իրավունքի հիմունքներ	0304/ B16		+						+							+						
21.	Քաղաքագիտության հիմունքներ	0304/B16			+												+	+					
22.	Կրոնագիտության հիմունքներ	0304/ B16			+												+						
23.	Մշակութաբանության հիմունքներ	0202/ B16					+						+				+						
24.	Տրամաբանության հիմունքներ	0304/ B16										+									+		+
25.	Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/ B16						+			+												
26.	Հոգեբանության հիմունքներ	0303/ B16															+	+					
27.	Անգլերեն-3	0305/ B17	+													+					+		



58.	"ՀԲ" Գյուղական և էկոլոգիական զբոսաշրջություն	0202/ B40				+		+		+		+										
59.	Զբոսաշրջային նախագծում	0202/ B41			+					+		+										
60.	Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձանները	0202/ B42				+	+					+										
61.	Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ	0202/ B43							+			+	+									
62.	Գնագոյացումը զբոսաշրջության ոլորտում	0201/ B44					+					+			+							
63.	Ուսումնական պրակտիկա	0202/ B45										+	+								+	
64.	Ավարտական աշխատանք	0202/ B46		+	+	+	+	+		+	+	+									+	
65.	Մասնագիտական պրակտիկա	0202/ B47		+					+		+		+		+	+						
66.	Անիմացիոն ծառայությունները զբոսաշրջության մեջ	0202/ B49					+						+	+							+	
67.	Ժամանցի կազմակերպման տեխնոլոգիաները զբոսաշրջության մեջ	0202/ B49							+	+					+	+						
68.	Միջազգային զբոսաշրջություն	0202/ B49			+	+						+		+								
69.	Ծրագրային զբոսաշրջություն	0202/ B50								+						+					+	
70.	Հայ և համաշխարհային արվեստ	0202/ B50					+						+								+	
71.	Հնագիտության հիմունքներ	0304/ B50		+											+							
72.	PR և գովազդը տուրիզմում	0202/ B51			+				+													
73.	Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման մեթոդներ	0202/ B51		+			+	+														
74.	Զբոսաշրջային ռեսուրսագիտություն	0202/ B51					+						+									
75.	Հայկական սփյուռքի աշխարհագրություն	0202/ B51			+		+						+									
76.	Մոնիալ-տնտեսական վիճակագրություն	0201/ B51										+			+	+						
77.	Տուրիստական ծառայությունների ստանդարտացում և սերտիֆիկացում	0202/ B51		+											+							

**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ**

Ուսումնական մոդուլի անվանումը	Կրեդիտներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ						Կիսամյակներ																Գնահատման ձևը
		Ընդ.	Լ.ս.	Դաս.	Գրծ./սեմ.	Լաբ.	Ինք.	1		2		3		4		5		6		7		8		
								Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	Կրդ.	Լ.ս.ժ	
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	<b>27</b>	<b>810</b>	<b>390</b>	<b>0</b>		<b>0</b>	<b>420</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>3</b>	<b>2</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
<b>Պարտադիր դասընթացներ</b>	<b>23</b>	<b>690</b>	<b>330</b>			<b>0</b>	<b>360</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>4</b>	<b>4</b>	<b>4</b>	<b>4</b>	<b>3</b>	<b>2</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	30		30	0	30	2	2															Ստ.
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	30		30	0	30			2	2													Ստ.
Հայոց պատմություն -1	2	60	30	15	15	0	30					2	2											Ստ.
Հայոց պատմություն -2	2	60	30	15	15	0	30						2	2										Ստ.
Օտար լեզու-1	2	60	30		30	0	30	2	2															Ստ.
Օտար լեզու-2	2	60	30		30	0	30			2	2													Ստ.
Ռուսաց լեզու-1	2	60	30		30	0	30			2	2													Ստ.
Ռուսաց լեզու-2	2	60	30		30	0	30					2	2											Ստ.
Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	2	60	30	10	20	0	30	2	2															Ստ.
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	30	30		0	30						2	2										Ստ.
Փիլիսոփայություն	2	90	30	30		0	60								3	2								Ստ.
Ֆիզդաստիարակություն	0	30	30		30			0	2	0	2	0	2	0	2									
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ 4)</b>	<b>4</b>	<b>120</b>	<b>60</b>			<b>0</b>	<b>60</b>					<b>2</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>2</b>									Ստ.
Բարոյագիտության հիմունքներ		<b>60</b>	<b>30</b>				<b>30</b>					<b>2</b>	<b>2</b>											
Գործարարության հիմունքներ				<b>30</b>																				
Իրավունքի հիմունքներ				<b>30</b>																				
Քաղաքագիտության հիմունքներ				<b>30</b>																				
Կրոնագիտության հիմունքներ				<b>30</b>																				
Մշակութաբանության հիմունքներ				<b>30</b>																				
Տրամաբանության հիմունքներ				<b>30</b>																				

Սոցիոլոգիայի հիմունքներ				30																			
Հոգեբանության հիմունքներ				30																			
Անգլերեն-3					30																		
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր				30																			
Կիրառական վիճակագրություն				30																			
Հաղորդակցման հմտություններ				30																			
Մաթեմատիկայի հիմունքներ				30	30																		
Մեդիագրագիտություն				30																			
Ռուսաց լեզու-3					30																		
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ					30																		
Քննական և ստեղծագործական մտածողություն				30																			
<b>ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	<b>213</b>	<b>6390</b>	<b>1980</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>4410</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>18</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>10</b>	
<b>Պարտադիր դասընթացներ</b>	<b>150</b>	<b>4500</b>	<b>1500</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>3000</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>16</b>	<b>27</b>	<b>18</b>	<b>18</b>	<b>12</b>	<b>6</b>	<b>4</b>	<b>3</b>	<b>2</b>	
Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն	6	180	60	30	30		120	6	4														Առ. եզ. գն.
Մարդը և նրա պահանջմունքները	3	90	30	30	15		60	3	2														Առ. ընթ. գն.
Երկրագիտություն	6	180	60	30	30		120	6	4														Առ. եզ. գն.
Զբոսաշրջության հիմունքներ	9	270	90	45	45		180	9	6														Եզ. գն.
Հայ ազգագրություն	3	90	30	15	15		60			3	2												Առ. ընթ. գն.
Տնտեսագիտություն	6	180	60	45	15		120			6	4												Եզ. գն.
Ռեկրեացիայի աշխարհագրություն	9	270	90	45	45		180			9	6												Եզ. գն.
Տեղեկատվական տեխնոլոգիաները զբոսաշրջության մեջ	6	180	60	30	30		120			6	4												Առ. եզ. գն.
Հյուրընկալության ինդուստրիա	6	180	60	30	30		120					6	4										Եզ. գն.
Բնակչության աշխարհագրություն ազգագրության հիմունքներով	6	180	60	45	15		120					6	4										Եզ. գն.
Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձաններ	6	180	60	30	30		120					6	4										Եզ. գն.

Անվտանգությունը զբոսաշրջության մեջ	6	180	60	45	15	120					6	4										Առ. եզ. գն.			
Զբոսաշրջության աշխարհագրություն	9	270	90	45	45	180							9	6									Եզ. գն.		
"ՀԲ" Զբոսաշրջության հետազոտության մեթոդներ	6	180	60	30	30	120							6	4									Եզ. գն.		
Գործարար շփումների էթիկա	6	180	60	45	15	120							6	4									Առ. ընթ. գն.		
Թանգարանագիտություն	3	90	30	15	15	60									3	2							Առ. ընթ. գն.		
Զբոսաշրջության մենեջմենթ	6	180	60	30	30	120									6	4							Եզ. գն.		
"ՀԲ" Հայաստանի աշխարհագրություն	9	270	90	45	45	180									9	6							Եզ. գն.		
"ՀԲ" Էքսկուրսիոն գործ	6	180	60	45	15	120									6	4							Եզ. գն.		
Տուրօպերատորական և տուրգործակալական գործունեություն	3	90	30	15	15	60									3	2							Առ. ընթ. գն.		
Բուժ-առողջարարական զբոսաշրջություն	3	90	30	15	15	60											3	2					Առ. ընթ. գն.		
Զբոսաշրջության մարքեթինգ	6	180	60	30	30	120											6	4					Եզ. գն.		
"ՀԲ" Գյուղական և էկոլոգիական զբոսաշրջություն	9	270	90	45	45	180											9	6					Եզ. գն.		
Զբոսաշրջային նախագծում	6	180	60	45	15	120											6	4					Առ. Ընթ. Գն.		
Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձաններ	6	180	60	45	15	120														6	4		Եզ. գն.		
Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ	6	180	60	45	15	120														6	4		Առ. եզ. գն.		
Գնագոյացումը զբոսաշրջության ոլորտում	3	90	30	15	15	60																3	6	Առ. ընթ. գն.	
<b>Մասնագիտական կառուցամաս (կամրնտրական)</b>	<b>12</b>	<b>360</b>	120	-	-	-	240	0	0	0	0	0	0	0	0	0	0	6	4	6	4		Եզ. գն.		
Անիմացիոն ծառայությունները զբոսաշրջության մեջ	6	180	60	45	15	120																			
Ժամանցի կազմ. տեխ. զբոս. մեջ																								6	4
Միջազգային զբոսաշրջություն																									

<b>Մասնագիտական կառուցամաս (կամ ընտրական)</b>		<b>180</b>	60				120												6	4				
Ծրագրային զբոսաշրջություն																								
Հայ և համաշխարհային արվեստ	<b>6</b>	<b>180</b>	60	45	15		120												6	4				
Հնագիտության հիմունքներ																								
<b>Մասնագիտական կառուցամաս (կամ ընտրական)</b>	<b>12</b>	<b>360</b>	120				240														12	24		
PR և գովազդը տուրիզմում		<b>360</b>	120		15		240														12	24	Առ. Ընթ. Գն.	
Զբոս. ծառ. կազմ. մեթոդներ				45	15																			
Զբոսաշրջային ռեսուրսագիտություն				45	15																			
Հայկական սփյուռքի աշխարհագրություն				45	15																			
Սոցիալ-տնտեսական վիճակագրություն				45	15																			
Տուրիստական ծառայությունների ստանդարտացում և սերտիֆիկացում				45	15																			
<b>Հարակից կրթական ծրագրերից ընտրվող դասընթացներ</b>	<b>12</b>	<b>360</b>	<b>60</b>	<b>60</b>			<b>120</b>												1	8			Եզ. գ ն.	
Հարակից դասընթաց – 1	6	<b>180</b>	30	30			<b>120</b>												6	4				
Հարակից դասընթաց – 2	6	<b>180</b>	30	30			<b>120</b>												6	4				
<b>Կրթական այլ մոդուլներ</b>	<b>15</b>	<b>450</b>	0	0		0	450														15	0		
Ուսումնական պրակտիկա	<b>3</b>	<b>90</b>					90						3										Ստ.	
Մասնագիտական պրակտիկա	<b>3</b>	<b>90</b>					90														3		Ստ.	
Ավարտական աշխատանք	<b>12</b>	<b>360</b>					360															12	Առ. ընթ. գն.	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>240</b>	<b>6960</b>	<b>2460</b>				<b>4620</b>	<b>30</b>	<b>22</b>	<b>30</b>	<b>22</b>	<b>30</b>	<b>22</b>	<b>30</b>	<b>22</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>20</b>	<b>30</b>	<b>10</b>	
<b>Կրթական մոդուլների քանակը</b>								<b>7</b>	<b>7</b>	<b>7</b>	<b>7</b>	<b>6</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>49</b>							

**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ**

1.0302/B01	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ -1	3. 2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/ շաբ.	5.0/10/0	
6.1-ին կիսամյակ	7. Մտուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները,</li> <li>ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը,</li> <li>ձևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն),</li> <li>սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:</li> <li>գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>աշխատելու թիմում:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Բ3.</b> կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> <p><b>Գ2.</b> մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն,</p> <p><b>Գ3.</b> պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>քննարկում /բանավեճ</li> <li>համագործակցային աշխատանք</li> <li>մտազրոհ</li> <li>վերլուծական մեթոդ</li> <li>խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>գրավոր մեթոդ</li> <li>բացատրական մեթոդ:</li> </ol>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Մտուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p>		

**Թեմա 1.** Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: **Թեմա 2.** Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: **Թեմա 3.** Բառային մակարդակ: **Թեմա 4.** Քերականական մակարդակ: Ձևաբանություն: **Թեմա 5.** Շարահյուսություն:

- 14.Հիմնական գրականության ցանկ.**
1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014:
  2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր., 2015:
  3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002:
  4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003:
  5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
  6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:

1.0302/B03	2.Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.2-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնելու սումնական գործընթացներում:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:</li> </ol>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու խոսքի արժանիքները,</li> <li>2. կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, կունենա խոսքային բարձր էթիկետ:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Բ3.</b>կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p><b>Գ6.</b>Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>		

<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. քննարկում /բանավեճ</li> <li>2. համագործակցային աշխատանք</li> <li>3. մտազրոհ</li> <li>4. վերլուծական մեթոդ</li> <li>5. խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>6. գրավոր մեթոդ</li> <li>7. բացատրական մեթոդ:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b> <b>Թեմա 1.</b> Խոսքի արժանիքները: <b>Թեմա 2.</b> Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: <b>Թեմա 3.</b> Խոսքի գործառական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: <b>Թեմա 4.</b> Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014:</li> <li>2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր., 2015:</li> <li>3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002:</li> <li>4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003:</li> <li>5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003:</li> <li>6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:</li> </ol>

1.0305/B04	2.Ռուսաց լեզու-1	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.2-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջունքներից: <b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա,</li> <li>2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք,</li> <li>3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները,</li> <li>4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը,</li> <li>2. ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար,</li> <li>3. կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին),</li> <li>2. ընկալելու, սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:</li> </ol>		

<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում:</p> <p><b>Գ6.</b> Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. քննարկում /բանավեճ</li> <li>2. համագործակցային աշխատանք</li> <li>3. էվրիստիկական մեթոդ</li> <li>4. մտազրոհ</li> <li>5. ինդուկտիվ մեթոդ</li> <li>6. դեդուկտիվ մեթոդ</li> <li>7. վերլուծական մեթոդ</li> <li>8. խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>9. գրավոր մեթոդ</li> <li>10. բացատրական մեթոդ:</li> </ol>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են</b></p> <p>Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p>		
<p><b>12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հնչյունաբանություն: Չայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: <b>Թեմա 2.</b> Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: <b>Թեմա 3.</b> Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: <b>Թեմա 4.</b> Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:</p>		
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004</li> <li>2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Ходжумян Б.С.. Ереван, изд-во ЕГУ, 2015г.</li> <li>3. Учебные пособия по специальности.</li> </ol>		

1.0305/B06	2.Ռուսաց լեզու-2	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.3-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա,</li> <li>2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք,</li> </ol>		

<p>3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները,</p> <p>4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:</p>
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>գործածելու սովյալ մասնագիտության տերմինային համակարգը,</li> <li>կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,</li> <li>գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,</li> <li>կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,</li> <li>վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ,</li> <li>թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը,</li> <li>զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>գնահատելու, վերլուծելու և գուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,</li> <li>օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու</li> </ol>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p><b>Գ6.</b> Տիրապետելու բավարար գիտելիքների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>քննարկում /բանավեճ,</li> <li>համագործակցային աշխատանք,</li> <li>էվրիստիկական մեթոդ,</li> <li>մտագրոհ,</li> <li>ինդուկտիվ մեթոդ,</li> <li>դեդուկտիվ մեթոդ,</li> <li>վերլուծական մեթոդ,</li> <li>խոսքային կամ բանավոր մեթոդ,</li> <li>գրավոր մեթոդ,</li> <li>բացատրական մեթոդ:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</b></p> <p><b>Ստուգարքն</b> անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p>
<p><b>12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: <b>Թեմա 2.</b> Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառա-կապակցություն, նախադասու թյանդամներ/:</p>

Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: **Թեմա 3.** Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: **Թեմա 4.** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

**14. Հիմնական գրականության ցանկը**

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1.0304/B07	2. Հայոց պատմություն -1	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5. 5/0/5	
6.3-րդ կիսամյակ	7. Մտուզարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը:</b> Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեոնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին,</li> <li>2. ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորոշություն,</li> <li>3. ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:</li> </ol> <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը,</li> <li>2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները,</li> <li>3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:</li> <li>2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում:</li> <li>3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական</li> </ol>		

<p>դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները:</p> <p><b>գ. քնդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում,</li> <li>2. բանավիճելու:</li> </ol>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b></p> <p><b>Ա5.</b>գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերի, նշանակության գնահատում իրականացնելու կարողություն,</p> <p><b>Գ6.</b>Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. ռեֆերատ</li> <li>3. անհատական և խմբային առաջադրանքներ:</li> </ol>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Ստուգաքրք.</b> Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հայաստանը հնագույն շրջանում: <b>Թեմա 2.</b> Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա.9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: <b>Թեմա 3.</b> Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: <b>Թեմա 4.</b> Արշակունիների թագավորությունը: <b>Թեմա 5.</b> Հայաստանը վաղ միջնադարում: <b>Թեմա 6.</b> Հայաստանը զարգացած միջնադարում: <b>Թեմա 7.</b> Հայաստանը ուշ միջնադարում:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հայոց պատմություն (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012:</li> <li>2. Հայ ժողովրդի պատմություն (Ստ.Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975:</li> <li>3. Հայոց պատմություն. հիմնահարցեր (Հր.Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000:</li> <li>4. Հայոց պատմություն (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009:</li> </ol>

1.0105/ B08	2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.Ստուգաքրք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդկենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնել լու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպատակ հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարհայացքի ինքնուրույն ընտրության:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում</li> </ul>		

միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին,

- ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները,
- դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները,
2. նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները,
3. բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին,
2. նախազուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից,
3. անցկացնելու մոնիթորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

***գ. քննիանրական/փոխանցելի կարողություններ***

1. ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. տվյալ էկոհամակարգի վրա կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու նրա վրա այս կամ այն գործոնի ազդեցությունը:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ4.** Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: <b>Թեմա 2.</b> Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: <b>Թեմա 3.</b> Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: <b>Թեմա 4.</b> Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: <b>Թեմա 5.</b> Արդի կրոնական միավորումներն ու համայնքները:</p>		

**Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելության եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելության եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելության եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելության եկեղեցին XIX-XX դարերում:

**14. Հիմնական գրականության ցանկը**

1. Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան, Եր., 2002:
2. История религии (учеб. Под общ. Ред. И.Н.Яблокова) Т. 1-2. М., 2007.
3. Лебедев В., Религиоведение; учебник для бакалавров, М. 2013.
4. Основы религиоведения (учеб. Под общ. Ред. И.Н.Яблокова) М., 2005.
5. Религиоведение, (учеб. Под общ. Ред. М.М.Шахнович), СПб, 2012.

1.0303/B16	2. Հոգեբանության հիմունքներ	3.2 կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7. Մտուցարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզականային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,</li> <li>2. լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ,</li> <li>3. ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները:</li> <li>2. Տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները:</li> <li>3. Պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները:</li> <li>4. Բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացները և նրանց առանձնահատկություններին:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մեկնաբանելու անձի հուզականային ոլորտի նրբությունները:</li> <li>2. Տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Չարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները:</li> <li>2. Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> </ol>		

<ol style="list-style-type: none"> <li>2. քննարկում</li> <li>3. բանավեճ</li> <li>4. գործնական պարապմունք</li> <li>5. ռեֆերատ/էսսե</li> <li>6. անհատական և խմբային առաջադրանքներ:</li> </ol>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>          Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b>  <b>Թեմա 1.</b> Հոգեբանության առարկան, խնդիրները: <b>Թեմա 2.</b> Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: <b>Թեմա 3.</b> Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: <b>Թեմա 4.</b> Հոգեկանի ակտիվության մակարդակները: <b>Թեմա 5.</b> Հոգեկանի և գիտակցության զարգացումը: <b>Թեմա 6.</b> Անձի հոգեբանական բնութագիրը: <b>Թեմա 7.</b> Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: <b>Թեմա 8.</b> Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: <b>Թեմա 9.</b> Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: <b>Թեմա 10.</b> Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: <b>Թեմա 11.</b> Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: <b>Թեմա 12.</b> Մտածողություն, տեսակները, գործընթացները: <b>Թեմա 13.</b> Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: <b>Թեմա 14.</b> Անձի հուզականային կողմը: <b>Թեմա 15.</b> Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է. Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ/, Եր., ԵՊՀ հրատ. 2010:</li> <li>2. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր.1997:</li> <li>3. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005:</li> <li>4. Маклаков А. Г., Общая психология. М., 2007:</li> <li>5. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).</li> <li>6. Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010.</li> </ol>

1.0202/B16	2.Մշակութաբանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7.Մտուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանություն առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, մշակութային երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:</p>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենադիպուկ սահմանումները և տեսությունները,</li> <li>2. սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները,</li> <li>2. վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան,</li> <li>3. մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. աշխատելու թիմում,</li> </ol>		

2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները՝**  
**Ա5.** գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը,  
**Բ5.** ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա,  
**Գ3.** Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝**  
 1. դասախոսություն /ավանդական և ինտերակտիվ/  
 2. քննարկում /բանավեճ  
 3. համագործակցային աշխատանք  
 4. մտազրոհ  
 5. վերլուծական մեթոդ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշները՝**  
 Ստուգաբքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝**  
**Թեմա 1.** Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 3.** Հոգևոր գործունեության մշակութային ձևեր: Կրոն, գիտություն և արվեստ: **Թեմա 4.** Մշակույթ-բնություն-հասարակություն: **Թեմա 5.** Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): **Թեմա 6.** Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: **Թեմա 7.** Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: **Թեմա 8.** Վերածնունդ և Ռեֆորմացիա: **Թեմա 9.** Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթ: **Թեմա 10.** Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթ: **Թեմա 11.** Հայկական մշակույթ:

**14.Հիմնական գրականության ցանկ՝**  
 1. Գևորգյան Հ., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր., 1997:  
 2. Մելքունյան Գ., Մշակութաբանություն, Եր., 2000:  
 3. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, Եր., 1997:  
 4. Սարգսյան Ս.Ա., Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Եր., 2004:  
 5. Арутюнов С.А., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004.  
 6. Гуревич П., Культурология, Москва, 2001.  
 7. Розин В.М., Культурология, М., 1998.

1.0303/B16	2.Սոցիոլոգիայի հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	

6. 3/4-րդ կիսամյակ	7. Մտուցարք
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ,</li> <li>2. ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:</li> </ol>	
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները,</li> <li>2. սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները,</li> <li>2. վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը,</li> <li>3. մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. աշխատելու թիմում,</li> <li>2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol>	
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Ա6.</b> տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն),</p> <p><b>Բ3.</b> կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:</p>	
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. քննարկումներ</li> <li>3. բանավեճեր</li> <li>4. ռեֆերատներ</li> <li>5. զեկուցումներ:</li> </ol>	
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Մտուցարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p>	
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: <b>Թեմա 2.</b> Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: <b>Թեմա 3.</b> Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: <b>Թեմա 4.</b> Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: <b>Թեմա 5.</b> Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:</p>	
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Бабосов Е.М., Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8</li> <li>2. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011.</li> </ol>	

3. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.

4. Долгоруков А.М., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.

5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология: Очерки методологии. СПбГУ, 1994 г. (1-е изд.)

6. Кравченко А.И., Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998.

1.0304/B16	2.Տրամաբանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է՝</b> ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, զերծ մնալ տրամաբանական այն սխալներից:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները,</li> <li>2. ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ,</li> <li>3. ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին,</li> <li>4. ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:</li> </ol>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները,</li> <li>2. մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները,</li> <li>3. սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները,</li> <li>2. զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները,</li> <li>3. զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Բ3.</b>կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> <p><b>Գ6.</b>Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> <p><b>Գ9.</b>Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>		

<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>դասախոսություն</li> <li>քննարկում</li> <li>բանավեճ:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Վերջնաբերությունների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b> <b>Թեմա 1.</b> Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: <b>Թեմա 2.</b> Հասկացություն: <b>Թեմա 3.</b> Դատողություն: <b>Թեմա 4.</b> Տրամաբանության օրենքները: <b>Թեմա 5.</b> Մտահանգում: <b>Թեմա 6.</b> Ապացուցում և հերքում: <b>Թեմա 7.</b> Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, պարադոքս: Հիպոթեզ:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Բրուսյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976:</li> <li>Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.</li> <li>Гетманов А., Логика, Москва, 1993.</li> <li>Маковелский А., История логики, Москва, 1967.</li> <li>Демидов И., Логика, Москва, 2004:</li> </ol>

<b>1.0304/B16</b>	<b>2.Քաղաքագիտության հիմունքներ</b>	<b>3.2 ECTS կրեդիտ</b>
<b>4.2,5 ժամ/շաբ.</b>	<b>5.10/0/0</b>	
<b>6. 3/4-րդ կիսամյակ</b>	<b>7.Ստուգաք</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները,</li> <li>ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները,</li> <li>ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները,</li> <li>ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները,</li> <li>թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները,</li> <li>մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը,</li> <li>մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:</li> </ol> <p><b>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> <li>աշխատելու թիմում:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջաբերությունները.</b></p> <p><b>Ա3.</b> Բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում,</p> <p><b>Պ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</p> <p><b>Ս4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր</p>		

գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգարքն** անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 7.** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 12.** Գաղափարա-խոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: **Թեմա 15.** Քաղաքական մշակույթ:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Քաղաքագիտություն, Եր., 2006:
2. Буренко В., Журавлев В.В., Политология, М., 2004.
3. Гаджиев К., Политология. М., 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. М., 1999.
5. Пушкарева Г., Политология, М., 2002.
6. Мальцев В., Основы политологии, М., 1998.

1.0305/B17	2.Անգլերեն -3	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.3/4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը,</li> <li>2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները,</li> <li>3. զարգացնել անգլերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները,</li> <li>4. զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները:</li> <li>2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում:</li> <li>3. գործածելու անգլերենին բնորոշ խոսակցական կառույցներ:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p>		

<p>1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները:</p> <p>2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ:</p> <p>3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ:</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն:</p> <p>2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:</p> <p>3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:</p>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b>Պարզաբանելու զբոսաշրջության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, տեսությունները:</p> <p><b>Գ2.</b> Սայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p><b>Գ6.</b>Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. անհատական և խմբային առաջադրանքներ</p> <p>2. ընթերցանություն</p> <p>3. թեստ</p> <p>4. ռեֆերատ</p> <p>5. գրույց լեզվակրի հետ</p> <p>6. շնորհանդես</p> <p>7. ինքնուրույն աշխատանք</p>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը: <b>Թեմա 2.</b> Խոսակցական անգլերենին բնորոշ կառույցների ուսուցում: <b>Թեմա 3.</b> Բանավոր խոսք՝ ուղղված ուսանողների մասնագիտական գիտելիքների, վերլուծական ունակությունների խթանմանը:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015.</p> <p>2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017.</p> <p>3. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010.</p> <p>4. Alexander L.G., Fluency In English, Longman, 1967.</p> <p>5. Alexander L.G., For and Against, Longman, 1969.</p>

1.0105/B17	2.Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.3/4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է՝</b> հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդաբանության ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի</p>		

ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:

**Դասընթացի խնդիրները.**

1. ձևավորել բնագիտական աշխարհայացք,
2. ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը,
3. բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները,
4. ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը,
2. ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին,
3. մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում,
2. կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին,
3. կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը,
2. օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան,
3. ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.**

**Բ2.** Իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում,

**Բ3.** Կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,

**Գ9.** Վերլուծելու և եզրահանգումներ անելու դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),
2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),
3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),
4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական),
5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),
6. քննադական մտածողության մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացի շրջանակում:

Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին՝ նա ստանում է ստուգված:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները:Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները:Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, Եր., 2007:
2. Канке В.А., Концепции современного естествознания, Логос. М., 2002.
3. Концепции современного естествознания, Питер 2008, (Под.редакц. Л.А.Михайлова).

1.0201 / B17	2. Կիրառական վիճակագրություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7. Մտուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին ծանոթացնել Կիրառական վիճակագրության հիմունքներին որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի,</li> <li>• ուսանողներին մոտ ձևավորել վերացական մտածողություն:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կտիրապետի կիրառական վիճակագրության որոշ հարցերի:</li> <li>2. Կունենա վիճակագրական տվյալները ճիշտ մշակելու, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա հաշվելու հմտություններ:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Դիսկրետ պատահական մեծության հենքի վրա դասակարգել թվային բնութագրիչներ՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա:</li> <li>2. Նկարագրական վիճակագրության գործնականում իրականացնել հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում:</li> <li>3. Կկարողանա մոդելավորել առօրեական բնույթի որոշ խնդիրներ և լուծել:</li> <li>4. գործնականում իրականացնել հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. աշխատել հետազոտական խմբում,</li> <li>2. կիրառել գիտելիքները պրակտիկայում:</li> <li>3. վերլուծել վիճակագրական խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ:</li> </ol>		

<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b></p> <p><b>Ա4.</b> Վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. Դասախոսություններ դիդակտիկ նյութերի կիրառմամբ (համակարգիչ, աղյուսակներ և այլն)</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Դիսկրետ պատահական մեծության թվային բնութագրիչներ՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա: <b>Թեմա 2.</b> Նկարագրական վիճակագրություն: <b>Թեմա 3.</b> Նմուշահանում դիսկրետ և անընդհատ հատկանիշի դեպքում: <b>Թեմա 4.</b> Գնահատման տեսություն :</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ հրատ., Եր., 2016. 154 էջ:</p> <p>2. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 208 էջ:</p> <p>3. Հարությունյան Ե. և այլք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, Եր. Գիտություն., 2000, 298 էջ::</p> <p>4, Համբարձումյան Գ.Հ. «Հավանականությունների տեսություն» Եր.: «Լույս հրատարակչություն»: 1977, 400 էջ:</p> <p>4. Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, М., кн. дом Либроком, 2014. 352 с.</p> <p>5. Гмурман В.Е. «Руководство к решению задач по теории вероятностей и математической статистике» М.: Высш. школа, 2000, 400 с.</p>

1.0305/B17	2. Հաղորդակցման հմտություններ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:</p> <p><b>Դասընթացի խնդիրները՝</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նպաստել սովորողների քննադատական մտածողության ձևավորմանը՝ ստեղծելով ինքնուրույն որոշումներ կայացնելու, բազմաթիվ կարծիքների ու տեսակետների նկատմամբ հարգանք ունենալու, արդյունավետ հաղորդակցվելու մթնոլորտի զարգացմանը:</li> <li>2. ուսումնասիրել լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները,</li> <li>3. բացահայտել խոսքի ընդհանուր օինաչափությունները,</li> <li>4. դրսևորել գրական խոսքի բարձր մշակույթ,</li> <li>5. հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p>		

<p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <p>1. ներկայացնելու լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները.</p> <p>2. լուսաբանելու լեզվի դերը որպես հաղորդակցական միջոց,</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. տիրապետելու որոշակի աշխատանքային հմտությունների և տարբեր միջավայրերում քաղաքակիրթ, բարյացակամ հաղորդակցվելու ունակությունների:</p> <p>2. ընտրելու հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվաոճական միջոցներ.</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. դրսևորելու լեզվական բաձր մշակույթ, հարուստ բառապաշար, լայն աշխարհայացք, մասնագիտական էթիկա, հանրության հետ հաղորդակցվելու ունակություններ:</p>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները</b></p> <p><b>Գ2.</b>Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p><b>Գ3.</b>Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. Պասիվ դասախոսություն</p> <p>2. Ակտիվ դասախոսություն</p> <p>✓ <i>հարցուպատասխան</i></p> <p>✓ <i>գրույց</i></p> <p>3. Ինտերակտիվ դասախոսություն</p> <p>✓ <i>«PowerPoint» համակարգչային ծրագրով տեսադրվագաշարերի ցուցադրում</i></p> <p>✓ <i>հարցուպատասխան</i></p> <p>✓ <i>բանավեճ</i></p> <p>✓ <i>գրույց</i></p>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Ստուգարք.</b> վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p>
<p><b>13.Համառոտ բովանդակություն.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հաղորդակցության դերն ու նշանակությունը: <b>Թեմա 2.</b> Հաղորդակցման խոչընդոտները. գործնական հաղորդակցում: <b>Թեմա 3.</b> Հաղորդակցման դասակարգումները: <b>Թեմա 4.</b> Ուղղակի և անուղղակի հաղորդակցման ձևերը:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Երևան, 2001:</p> <p>2. Գաբրիելյան Յու., Լեզվական հաղորդակցության տեսություն, Երևան, 2018:</p> <p>3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2009:</p> <p>4. Պետրոսյան Ա., Գործարար հաղորդակցություն, Երևան, 2003թ.:</p> <p>5. Պետրոսյան Հ., Մարտիրոսյան Ա., Գործարար և գիտական հայոց լեզու, Երևան, 2015:</p> <p>6. Քարնեգի Դ., Ինչպե՞ս ձեռք բերել բարեկամներ և ինչպես ազդել մարդկանց վրա, 1936:</p>

1.0105 / B17	2. Մաթեմատիկայի հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<p><b>8. Օրագիրը նպատակ ունի.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկայի հիմունքներին՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի,</li> <li>• ուսանողներին մոտ ձևավորել վերացական մտածողություն:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կտիրապետի հանրակրթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ</li> </ul>		

<p>հարցերի:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Կունենա թվային տվյալները ճիշտ մշակելու, մասնագիտական վերլուծությունները գրաֆիկների, սանդղակների, մասերով արտահայտել տոկոսների միջոցով պատկերավորելու հմտություններ:</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տարրական ֆունկցիաների հենքի վրա դասակարգել ֆունկցիաները, սահմանել ֆունկցիայի անընդհատությունը ,հաշվել նրա սահմանը:</li> <li>• գործնականում իրականացնել հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում,</li> <li>• գործնականում իրականացնել հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն:</li> </ul> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• աշխատել հետազոտական խմբում,</li> <li>• կիրառել գիտելիքները պրակտիկայում:</li> <li>• վերլուծել խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ:</li> </ul>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b></p> <p><b>Գ1.</b> Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. Դասախոսություններ դիդակտիկ նյութերի կիրառմամբ (համակարգիչ, ադյուսակներ և այլն)</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգաբքը համարվում է հանձնված:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու:</li> <li>2. Բազմությունների տեսության տարրեր և թվային բազմություններ:</li> <li>3. Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն: Վեկտորական հաշիվ:</li> <li>4. Տեքստային խնդիրներ:(տոկոսի, խառնուրդների և շարժման խնդիրներ)</li> <li>5. Հանրահաշվական կորեր(ուղիղ գիծ, շրջանագիծ):</li> <li>6. Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրության տարրեր:</li> </ol>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ, Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ԵՊՀ, Երևան, 2004:</li> <li>2. Тихомиров Н. Б., Шелехов А. М., Математика, Учебный курс для юристов, Москва, Юрайт, 2000.</li> <li>3. Քարտաշյան Ա.Հ. Մաթեմատիկա Երևան. Լույս, 1983</li> <li>4. Стойлова Л.П. Математика Москва, Академия, 2007</li> <li>5. Лавров И.А., Максимова Л.Л. Задачи по теории множеств, математической логике и теории алгоритмов Москва, Физматлит 1995</li> </ol>

1.0302/B17	2.Մեդիագրագիտություն	3. 2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7.Ստուգաբք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել հասարակության և մեդիայի փոխհարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթացնել մեդիայի կողմից հանրային կարծիքի, սոցիալական դիրքորոշման, արժեհամակարգի ձևավորման</b></p>		

<p>մեխանիզմներին, ուսումնասիրել հասարակական գիտակցության և մեդիամիջավայրի փոխազդեցությունների շրջանակը, հասկանալ դրանց նախադրյալները և հետևանքները:</p>
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հիմնավորելու մեդիայի և տեղեկատվական հասարակության էությունը, դրանց հետ կապված հասկացությունները և հիմնական տեսությունները,</li> <li>2. Որոշելու մեդիայի արժեքաստեղծ գործառույթը, վերջինիս միջոցով հասարակական արժեքների ձևավորման փուլերը,</li> <li>3. Մատնանշելու սոցիալական դիրքորոշման փոփոխման մեխանիզմները՝ մեդիայի դերն ավելի ամբողջական պատկերացնելու համար,</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տարբերակելու մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը,</li> <li>2. Գնահատելու տեղեկատվական հասարակության հայաստանյան յուրահատկությունները,</li> <li>3. Հետազոտության ժամանակակից մեթոդներով համեմատելու մեդիատեսակները (մեդիա)՝ ըստ իրենց ազդեցիկության աստիճանի,</li> <li>4. Տարբերակելու ամբոխի կարգավորման/մանիպուլացման մեխանիզմներն ու հնարքները կոնկրետ դեպքերում,</li> </ol> <p><b>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Արժևորելու և քննադատական մոտեցում ցուցաբերելու մեդիաարտադրանքին,</li> <li>2. Սեփական հետազոտություններում մեթոդաբանական սկզբունքներով համակարգելու մեդիաազդեցության մեխանիզմները:</li> </ol>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի,</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. գործնական պարապմունք</li> <li>3. ինքնուրույն խատանքներ:</li> </ol>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգարքն անց է կացվում բանավոր:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հասարակության կառուցվածքը: Հասարակություն և անհատ: <b>Թեմա 2.</b> Մեդիա և մեդիամիջավայր: Մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը: <b>Թեմա 3.</b> Տեղեկատվական հասարակություն. ձևավորման նախադրյալները: <b>Թեմա 4.</b> Հասարակական գիտակցություն-մեդիամիջավայր. փոխադարձ ազդեցության բնույթը: <b>Թեմա 5.</b> Հասարակական գիտակցության մանիպուլյացիա: <b>Թեմա 6.</b> Մեդիա և արժեքներ. մեդիայի արժեքաստեղծ գործառույթը:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Morin E., Au-delà de la globalisation et du développement, société-monde ou empire-monde ? », La revue du MAUSS, 20, pp. 43-53, 2002.</li> <li>2. Назаров М. М., Массовая коммуникация и общество. Введение в теорию и исследования. — М.: «Аванти плюс», 2003.</li> <li>3. Поликарпова Е.В., Аксиологические Функции Масс-Медиа В Современном Обществе,</li> </ol>

1.0305/B17	2.Ռուսաց լեզու-3	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.3/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը,</li> <li>2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները,</li> <li>3. զարգացնել ռուսերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները,</li> <li>4. զարգացնել ռուսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ռուսերենի բառակազմության միջոցները:</li> <li>2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում:</li> <li>3. գործածելու ռուսերենին բնորոշ խոսակցական կառույցներ:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները:</li> <li>2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ:</li> <li>3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն:</li> <li>2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:</li> <li>3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. անհատական և խմբային առաջադրանքներ</li> <li>2. ընթերցանություն</li> <li>3. թեստ</li> <li>4. ռեֆերատ</li> <li>5. գրույց լեզվակրի հետ</li> <li>6. շնորհանդես</li> <li>7. ինքնուրույն աշխատանք</li> </ol>		
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց</p>		

բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:
<b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b> <b>Թեմա 1.</b> Շարահյուսություն: <b>Թեմա 2.</b> Ուղղագրության հիմնական կանոնները: <b>Թեմա 3.</b> Մասնագիտական տեքստ:
<b>14.Հիմնական գրականության ցանկ.</b> 1. Русский язык. Под общ.ред. к.ф.н. доцента Лалаян С.А. Ер., изд-во ЕГУ, 2018. 2. Русский язык. Под общ.ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 3. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015. 4. Учебные пособия по специальности.

1.0104/ B17	2.Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.3/4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	

**9.Դասընթացի նպատակն է** ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային նպահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

**Դասընթացի խնդիրները.**

- ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին,
- մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները,
- բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ,
- կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար,
- ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

**10.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
- Ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շարժումներ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
- Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
- Ընտրելու և ներկայացնելու Power Point համակարգի հնարավորությունները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

